ՀԱՆՐԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄՇԱԿՎԵԼ Է *ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ* ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ ... 3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ... 4
ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ ... 4
ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ... 7
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ... 7
ԾՆՈՒՆԴՆԵՐ ... 9
ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆ ... 10
ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 12
ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ... 12
ԱՇԽԱՏՈՒԺ ... 12
ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ ... 15
ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ... 17
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿ ... 18
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ ... 18
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ... 20
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՌՈՒՄԸ ... 21
ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ ... 22
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ... 26
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ ... 27
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ... 27
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ... 28
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ... 30
ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ ... 31
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 33
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ ... 35
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ... 35
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ... 36
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ... 37
ՓՄՁ ՈԼՈՐՏ ... 38
ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ ... 39
ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ... 40

Հապավումների ցանկ

ԱԱԳԻ	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ԱԹ	Աշխատուժի թերօգտագործում
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՎՀՎ	Աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված վճարումներ
ԱՎՄՀ	Աշխատանքի վիճակագիրների միջազգային համաժողով
ԱՏԳ	Արտաքին տնտեսական գործունեություն
ԱՏԳԱԱ	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ
ԱՏԹ	Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԿԲ	Կենտրոնական բանկ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՄՆԴ	Միջազգային ներդրումային դիրք
ՊԳԿ	Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊԾՄ	Պարենային ծախսերի մեթոդ
ՍԳԻ	Սպառողական գների ինդեքս
ՍԶՄ	Սպառողական զամբյուղի մեթոդ
ՎԿ	Վիճակագրության կոմիտե
ՎՊԽ	Վիճակագրության պետական խորհուրդ
ՏԳՏՀԴ	Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգիչ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՔԿԱԳ	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային հատվածի, նաև՝ լրագրողական հանրույթի՝ սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ տեղեկատվության կարիքների ուսումնասիրության արդյունքում առանձնացվել է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող վիճակագրական ցուցանիշների համախումբ՝ ըստ տարբեր ոլորտների: Ցուցանիշներն առանձնացվել են՝ հաշվի առնելով դրանց տեղեկատվականության աստիճանը, օգտագործման հաճախականությունը, ինչպես նաև վիճակագրական դիտարկման ու հրապարակման ինտենսիվությունը:

Սույն ուղեցույցում ամփոփված են ընտրված ցուցանիշների վերաբերյալ հակիրճ մեթոդական պարզաբանումներ, որոնք թույլ կտան ոչ մասնագետ օգտվողներին պատկերացում կազմել դրանց նպատակի, նկարագրման շրջանակի, կառուցման տրամաբանության և մեթոդական բովանդակության մասին: Ցուցանիշները դիտարկված են ըստ համապատասխան ոլորտների ու խոշորացված խմբերի:

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) բնութագրում է բնակչության անձնական սպառման համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների փաստացի հաստատագրված կազմի արժեքի փոփոխությունը ժամանակի և տարածության մեջ:

Համաձայն ԱՍԸՆ դասակարգչի սպառողական ապրանքները դասակարգվում են երկու հիմնական խմբերի՝ սպառողական ապրանքներ և սպառողական ծառայություններ:

Սպառողական ապրանքներն ըստ օգտագործման տևողության տարանջատվում են հետևյալ երեք խմբերի՝

- ✓ կարճատև օգտագործման ապրանքներ (սննդամթերք, ծխախոտ, գեղահարդարման ապրանքներ և այլն),
- ✓ միջին տևողության օգտագործման ապրանքներ (հագուստ, կոշիկ, ամանեղեն և այլն)
- ✓ երկարատև օգտագործման ապրանքներ (կահույք, հեռուստացույց, լվացքի մեքենա, մարդատար ավտոմեքենա և այլն):

Սպառողական ծառայությունները բնակչությանը մատուցված ծառայություններն են, որոնք ապրանքի տեսք չեն ստանում:

2017թ. հունվարից Հայաստանում սպառողական գների ինդեքսի հաշվարկը կատարվում է վերանայված մեթոդաբանությամբ:

Ընդհանուր առմամբ, ՍԳԻ զամբյուղում ներառված է 450 անվանում ապրանք-ծառայություն (շուրջ 8000 ապրանք (ծառայություն)–ներկայայացուցիչ): Ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչներն ընտրվում են հաշվի առնելով սպառողական շուկայում դրանց հագեցվածության ու սպառման աստիճանը, արդիականությունը, ներկայացուցչական լինելը և այլն:

ՍԳԻ հաշվարկման համար Երևանում և հանրապետության 10 մարզերում կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում:

Հանրապետությունում ՍԳԻ մեծությունը որոշվում է որպես առանձին մարզերի (բնակավայրերի) գների ինդեքսների միջին կշռված մեծություն: Ինդեքսի կշիռները հաշվարկվում են բնակչության թվաքանակի, ընդհանուր ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների հարաբերակցության հիման վրա:

ՀՀ-ում ՍԳԻ հաշվարկման կարևոր մեթոդական բարեփոխում է այն, որ ՍԳԻ զամբյուղի տեսակարար կշիռները արդեն վերանայվում են տարեկան պարբերականությամբ (բազիսային ժամանակաշրջան ընդունելով նախորդ տարվա դեկտեմբեր ամիսը): Սա համահունչ է լավագույն միջազգային փորձին և հնարավորություն կտա ունենալ հանրապետությունում գների ավելի ադեկվատ և ճկուն գնահատական: Սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների տեսակարար կշիռների վերահաշվարկը կատարվելու է հանրապետությունում ամեն տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (ընտրանքային) հետազոտության արդյունքների հիման վրա:

Ի հավելումն ՍԳԻ-ի, հանրապետությունում հաշվարկվում և հրապարակվում են գների այլ ինդեքսներ ևս, որոնց նպատակը առանձին ոլորտներում արտադրանքի գների մակարդակի և փոփոխությունների դիտարկման ապահովումն է:

Այսպես, արդյունաբերության ոլորտում հաշվարկվում է **ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը** (ԱԱԳԻ), որը բնութագրում է արդյունաբերության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների թողարկած արտադրանքի գների փոփոխությունը ժամանակի ընթացքում՝ առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի հաշվարկման:

Արդյունաբերական արտադրանքի գների փոփոխությունը դիտարկվում է ընտրանքային կարգով ընտրված արդյունաբերության ոլորտի բազային տնտեսավարող սուբյեկտների տվյալների հիման վրա: Տնտեսավարող սուբյեկտների ընտրանքն կատարվում է 3-5 տարին մեկ անգամ, նույն պարբերականությամբ նաև թարմացվում են կշիռները:

Ինդեքսը հաշվարկվում է՝ յուրաքանչյուր ամիսը նախորդ ամսվա նկատմամբ, բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ, նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ընթացիկ ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական կարգով) և եռամսյակային ինդեքսներ:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը բնութագրում է տրանսպորտի տարբեր տեսակներով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները ժամանակի ընթացքում: Դրանում ամփոփված են հանրապետությունում գործող 3 տեսակի՝ ավտոմոբիլային, երկաթուղային, խողովակաշարային բեռնափոխադրումների սակագների ինդեքսները: Վերջինները, իրենց հերթին, ցույց են տալիս տրանսպորտի առանձին տեսակներով բեռնափոխադրումների սակագների շարժն ընթացիկ ժամանակահատվածում բազիսայինի համեմատ՝ առանց հաշվի առնելու տեղափոխվող բեռների կառուցվածքային փոփոխությունների հետ կապված հանգամանքները (բեռի տեսակը, փոխադրման չափը, տեղ հասցնելու արագությունը և այլն): Բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկներն իրականացվում են ՏԳՏՀԴ-ին համապատասխան:

Շինարարության գների ինդեքսը հաշվարկվում է ըստ շինարարության տեխնոլոգիական կառուցվածքային բաղադրամասերի (շինմոնտաժային աշխատանքների, մեքենասարքավորումների ներդրումների, այլ աշխատանքների և ծախսերի). կշռված ընդհանուր ծավալում դրանց բաժնեմասով:

Շինմոնտաժային աշխատանքների գների ինդեքսի հիմքում ընկած են հանրապետությունում ընտրանքային ցանցի բազային շինարարական տնտեսավարող սուբյեկտների նյութերի, դետալների ու շինարարական այլ տարրերի գրանցված արժեքները, աշխատողների աշխատավարձը: Հաշվարկը կատարվում է հատուկ մշակված տեխնոլոգիական մոդելներով, որոնք իրենցից ներկայացնում են շինմոնտաժային աշխատանքների ծախսերը բնութագրող նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների ցանկ:

Գյուղմթերք արտադրողների իրացման գների ինդեքսն արտահայտում է գյուղատնտեսական արտադրանք արտադրողի տարբեր ուղղություններով իրացված արտադրանքի գների փոփոխությունները ժամանակի և տարածության մեջ: Ինդեքսը հաշվարկվում է Հայաստանում 7440 գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 59 անվանում գյուղմթերքի գների ինդեքսների ագրեգացման միջոցով՝ ըստ բուսաբուծական և անասնաբուծական մթերքի և ըստ մարզերի: Դրանցից յուրաքանչյուրն, իր հերթին, միատեսակ ապրանքախմբում ներառված առանձին ապրանքատեսակների ինդեքսների կշռված մեծություն է: Անհատական ինդեքսների կշռման բազան հաշվետու ամսում իրացված արտադրանքի ծավալն է:

Գյուղատնտեսության ոլորտում օգտագործվում է նաև **գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքսը**, որը նկարագրում է արտադրության միջոցների գնման գների փոփոխությունների շարժը՝ հաշվետու ժամանակահատվածում բազիսայինի համեմատ: Այս ինդեքսը հաշվարկվում է 7440 գյուղացիական տնտեսությունների կողմից ձեռք բերված 78 անվանում արտադրության միջոցների գնման գների հետազոտման տվյալների հիման վրա:

Արտաքին առևտրի գների (միավորի արժեքի) ինդեքսը բնութագրում է արտաքին առևտրի ապրանքների գների փոփոխման հաշվին արտահանման և ներմուծման արժեքի փոփոխությունն անփոփոխ, հաստատուն ֆիզիկական ծավալի պայմաններում: Ինդեքսի հաշվարկի համար տվյալների աղբյուրներն են ՀՀ մաքսային վիճակագրության ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերը: Ինդեքսը հաշվարկվում է 4 ուղղություններով՝ «Ըստ բոլոր երկրների», «Ըստ ԱՊՀ երկրների», «Ըստ այլ երկրների», այդ թվում՝ «Ըստ ԵՄ երկրների»՝ համաձայն «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ դասակարգչի» (ԱՏԳԱԱ) 10-նիշ ծածկագրման: Ինդեքսը հաշվարկվում է Լասպեյրեսի միջին արժեքի բանաձևով՝ ամսական պարբերականությամբ, նաև՝ յուրաքանչյուր ամիսը նախորդ ամսվա նկատմամբ, բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ, նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ընթացիկ ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական կարգով) և եռամսյակային ինդեքսներ:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշի հաշվարկի հիմքը 2011թ. մարդահամարի տվյալներն են, որոնք արդիականացվում են՝ յուրաքանչյուր տարի

գումարելով տվյալ տարածքում ծնվածների և եկողների թվաքանակն ու հանելով մահացածների և տվյալ տարածքից մեկնածների թվաքանակը:

Միգրացիայի վերաբերյալ վարչական տվյալները (հաշվառում / հաշվառումից հանում) ստացվում են ՀՀ ոստիկանությունից, սակայն քանի որ դրանք չեն ընդգրկում բնակչության տեղաշարժերն ամբողջապես (մարդիկ հիմնականում իրենց տեղաշարժերի մասին չեն տեղեկացնում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն), ուստի ստացված տվյալները ենթարկվում են վերագնահատման (վիճակագրական ճշգրտման)՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով ստացված միգրացիայի գնահատականները:

Բնակչության բաշխումը քաղաք/գյուղ կտրվածքով կատարվում է ըստ նրանց **բնակության (հաշվառման) վայրի**: Քաղաքները և գյուղերը սահմանված են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Մարդահամարի պահին հաշվի է առնվում բնակչության երկու կատեգորիա: **Մշտական բնակչություն**՝ տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր բացակայող բնակչության թվաքանակի ցուցանիշները: Առկա բնակչություն՝ տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր ներկա բնակչության թվաքանակի ցուցանիշները:

Ժամանակավոր բացակա բնակչություն են համարվում՝ մարդահամարի պահին իրենց հիմնական (մշտական) բնակության վայրից մինչև մեկ տարի ժամկետով բացակայողները:

Ժամանակավոր ներկա բնակչություն են համարվում մարդահամարի պահին տվյալ տարածքում ոչ ավել քան մեկ տարի ժամկետով ներկա գտնվող և մշտապես չբնակվողները:

Աշխատունակ տարիքի բնակչությանը վերագրվել են մինչև 01.01.1997թ.-ը՝ 16-59 տարեկան տղամարդիկ և 16-54 տարեկան կանայք, այս ընթացքում շեմը պարբերաբար փոփոխվել է, իսկ 01.01.12թ.- ից՝ աշխատունակ տարիքի բնակչության կազմում ներառված են 16-62 տարեկան կանանց և տղամարդկանց թվաքանակները:

Ժողովրդագրական խնամառության գործակիցը հաշվարկվում է 0-15 տարեկան և 63 ու բարձր տարիքի բնակչության թվաքանակների հանրագումարի հարաբերակցությամբ՝ 16-62 տարեկան բնակչության նկատմամբ:

Երիտասարդների խնամառության գործակիցը՝ 0-15 տարեկանների հարաբերակցությունն է 16-62 տարեկան 100 բնակչի հաշվով, իսկ տարեցների խնամառության գործակիցը 63 ու բարձր տարիքի բնակչության հարաբերակցությունն է 16-62 տարեկան 100 բնակչի հաշվով:

Ծերացման գործակիցը ներկայացնում է 60 և բարձր տարիքի բնակչության թվաքանակը՝ 15 տարեկանից ցածր 100 բնակչի հաշվարկով:

ԾՆՈՒՆԴՆԵՐ

Ծնունդների մասին տեղեկությունները ստացվում են ծննդյան վերաբերյալ քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հիման վրա, որոնք տրամադրվում են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության տարածքային ստորաբաժանումների կողմից:

2005թ. հոկտեմբերի 16-ից կիրառության մեջ են դրվել «կենդանածնության, մեռելածնության և պերինատալ շրջանի» ԱՀԿ սահմանումները՝ հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայմանը համապատասխան (ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 16-ի թիվ 949-Ն որոշում): Ըստ այդմ, կենդանածնություն է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրսբերումը, անկախ հղիության ժամկետից, որից հետո պտուղը շնչում կամ ցուցաբերում է կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են. սրտխփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները, անկախ նրանից, թե արդյոք կտրված է պորտալարը, և կամ անջատված է ընկերքը: ՔԿԱԳ տարածքային մարմիններում գրանցման են ենթակա 500գ և ավելի քաշով կենդանածնության բոլոր դեպքերը:

Ծնելիության ընդհանուր գործակիցը հաշվարկվում է որպես ծնվածների (կենդանի) և մշտական բնակչության թվաքանակի միջին տարեկան ցուցանիշների հարաբերություն, 1 000 բնակչի հաշվով:

Ծնելիության տարիքային գործակիցները բնութագրում են յուրաքանչյուր տարիքային խմբի կանանց ծնելիության միջին տարեկան մակարդակը:

Դրանք հաշվարկվում են որպես տվյալ տարիքային խմբի կանանց՝ տարվա ընթացքում ծնած երեխաների թվաքանակի և ընթացիկ գնահատման արդյունքներով ստացված համապատասխան տարիքի կանանց միջին տարեկան թվաքանակի հարաբերություն:

Մինչև 20 տարեկան տարիքային խմբի համար գործակցի հաշվարկման ժամանակ որպես հայտարար ընդունվում է 15-19 տարեկան կանանց թվաքանակը: 15-49 տարեկան տարիքային խմբի համար գործակցի հաշվարկման ժամանակ համարիչում

հաշվի են առնվում բոլոր կենդանածինները, ներառյալ ինչպես մինչև 15 տարեկան, այնպես էլ 50 տարեկանից բարձր մայրերը:

Ծնելիության գումարային գործակիցը կամ պտղաբերության գործակիցը բնութագրում է երեխաների միջին թվաքանակը, որ կծնի մեկ կինն իր ծնունակ տարիքում, իր ողջ կյանքի ընթացքում ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում:

Վերարտադրության բրուտտո գործակիցը ցույց է տալիս, թե միջին հաշվով քանի աղջիկ երեխա կծնի մեկ կինն իր ծնունակ տարիքում, եթե պահպանվի ծնելիության տվյալ տարվա մակարդակը:

Վերարտադրության նետտո գործակիցը ցույց է տալիս, թե միջին հաշվով քանի աղջիկ երեխա կծնի մեկ կինն իր ողջ կյանքի ընթացքում, որոնք կհասնեն մոր տարիքին՝ իրենց ծնվելուց, յուրաքանչյուր տարիքում ծնելիության և մահացության տվյալ ժամանակաշրջանի մակարդակների պահպանման դեպքում:

ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՀԿ սահմանման համաձայն, որը տեղ է գտել նաև ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 16-ի 959-Ն որոշման մեջ, **մեռելածնություն** է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրսբերումը, որից հետո պտուղը չի շնչում կամ չի ցուցաբերում կյանքի այլ նշան՝ ինչպիսիք են սրտխփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները: ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ-ի մարմիններում գրանցվում և պերինատալ մահացության ցուցանիշում ներառվում են 500գ և ավելի քաշով (22 շաբաթ և ավելի հղիության ժամկետով) մեռելածնության դեպքերը:

Նորածնային (նեոնատալ) մահացությունը կենդանածինների մահացությունն է կյանքի առաջին 28 լրացած օրերի (4 շաբաթվա) ընթացքում: Այն բաժանվում է **վաղ նորածնային մահացության**՝ մանկան մահը կյանքի 1-ին շաբաթում և ուշ նորածնային մահացության՝ 7-րդ օրվանից հետո, բայց մինչև 28 լրացած օրը:

Կյանքի 28 լրացած օրվանից մինչև 12 ամսական հասակում մանկան մահացությունը բնութագրվում է որպես **հետնորածնային (պոստնեոնատալ) մահացություն**:

Մանկական մահացության ցուցանիշը բնութագրում է մինչև 1 տարեկան երեխաների մահացությունը:

Մանկական մահացության գործակիցը հաշվարկվում է մինչև 1 տարեկան հասակում մահացածներից թվաքանակը նույն ժամանակահատվածում ծնվածների թվաքանակի վրա հարաբերելու միջոցով: Հաշվարկվում է 1 000 ծնվածի հաշվով:

Երեխաների մահացության ցուցանիշը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում 0-4 տարեկան հասակի երեխաների մահացությունը:

Երեխաների մահացության գործակիցը ներկայացնում է 0-4 տարեկան հասակում մահացած երեխաների թվաքանակի հարաբերությունը կենդանի ծնվածների ցուցանիշին: Հաշվարկվում է 1 000 կենդանի ծնվածի հաշվով:

Մահվան դեպքերի մասին տեղեկությունները ստացվում են քաղաքացիական կացության մահվան վերաբերյալ ակտերի գրառումների հիման վրա, որոնք տրամադրվում են ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության տարածքային բաժիններից:

Մահացության ընդհանուր գործակիցը հաշվարկվում է որպես հաշվետու տարում արձանագրված մահվան դեպքերի և մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշների հարաբերություն, 1 000 բնակչի հաշվով:

Մահացության տարիքային գործակիցները բնութագրում են յուրաքանչյուր տարիքային խմբում մահացության միջին մակարդակը: Դրանք հաշվարկվում են հաշվետու տարվա ընթացքում, տվյալ տարիքում մահացածների թվաքանակի և ընթացիկ գնահատման արդյունքներով ստացված, համապատասխան տարիքի բնակչության միջին տարեկան թվաքանակի (մշտական բնակչություն) հարաբերությամբ:

Մահվան պատճառների մասին տեղեկատվության աղբյուր է հանդիսանում մահվան մասին կազմված մահվան բժշկական վկայագրերում մահացության պատճառների վերաբերյալ բժշկի կատարած գրանցումը: Հիշատակված փաստաթղթերը՝ մահվան վերաբերյալ ակտի հետ միասին, վիճակագրական մշակման համար տրամադրվում են վիճակագրական մարմիններին:

Մինչև 2003թ. մահվան ակտերի մշակումն ըստ մահվան պատճառների իրականացվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված Հիվանդությունների միջազգային դասակարգչի՝ 9-րդ վերանայման, իսկ 2004թ.-ից՝ 10-րդ վերանայման համաձայն: Դրանով պայմանավորված, հիվանդությունների որոշ խմբերի համար ցուցանիշների համադրելիությունը չի պահպանվել:

Մայրական մահացությունը բնորոշվում է որպես հղիությամբ պայմանավորված կնոջ մահ, անկախ հղիության տևողությունից որը վրա է հասել հղիության ընթացքում կամ ավարտից հետո 42 օրերի ընթացքում, որևէ պատճառից՝ կապված հղիության հետ, կամ բարդացած հղիությունով, կամ դրա վարումով, բացի դժբախտ պատահարից կամ պատահական ծագած պատճառից:

Մահացության գործակիցն ըստ մահվան պատճառների՝ մահացածների թվաքանակն է ըստ մահվան առանձին պատճառների, հարաբերած մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակին: Ի տարբերություն մահվան ընդհանուր գործակիցների, տվյալ հաշվարկը տարեկան կտրվածքով կատարվում է 100 000 բնակչի հաշվով:

Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից - տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը, միջին հաշվով, կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մի տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամուսնությունների և ամուսնալուծությունների մասին **տեղեկությունները** ստացվում են ամուսնության և ամուսնալուծության ակտերի հիման վրա, որոնք տրամադրվում են ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության տարածքային բաժինների կողմից:

Ամուսնության ընդհանուր գործակիցը հաշվարկվում է գրանցված ամուսնությունների քանակի և մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշների հարաբերությամբ: Հաշվարկվում է 1 000 բնակչի հաշվով:

Ամուսնալուծության ընդհանուր գործակիցը որոշվում է գրանցված ամուսնալուծությունների քանակի և մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշների հարաբերությամբ: Հաշվարկվում է 1 000 բնակչի հաշվով:

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ

ԱՇԽԱՏՈՒԺ

Հայաստանում 2018թ.-ից վերանայվել է աշխատուժի հետազոտության հիմքում ընկած մեթոդաբանությունը: Դա կատարվել է աշխատաշուկայի նոր զարգացումները պատշաճ կերպով արտացոլելու, ցուցանիշների միջազգային համադրելիությունը ապահովելու նպատակով: Ըստ այդմ՝

- Աշխատուժի ցուցանիշները վերաբերում են ՀՀ մշտական **(**ռեզիդենտ**)** բնակչությանը**:**
- Արդիականացվել է ցուցանիշի անվանումը՝ «Աշխատուժ» եզրույթը համարժեք է նախկին՝ «տնտեսապես ակտիվ բնակչություն» եզրույթին: Նույն կերպ՝ «Աշխատուժի մասնակցության մակարդակ»-ը համարժեք է նախկին՝ «տնտեսական ակտիվության մակարդակ» եզրույթին:

- Զբաղվածության գործառնական սահմանման փոփոխությամբ պայմանավորված, սեփական սպառման համար ապրանքների արտադրությունը չի համարվում զբաղվածություն: Ըստ այդմ՝ սեփական սպառման համար ապրանք արտադրողները, աշխատաշուկայում իրենց ակտիվության բնույթից կախված, դասակարգվել են միմյանց բացառող կատեգորիաներից որևէ մեկում՝ «գործազուրկ» կամ «աշխատուժից դուրս բնակչություն»:

Աշխատուժի, աշխատանքային շուկայի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի հետազոտությունն է:

Աշխատանքային ռեսուրսները աշխատուժի (զբաղված և գործազուրկ բնակչություն) և աշխատուժից դուրս բնակչության (աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող) հանրագումարն են:

Աշխատանքային ռեսուրսների թվաքանակը նույնական է համապատասխան տարիքային խմբի մշտական բնակչության թվաքանակի հետ, որում ներառվում են տվյալ տնային տնտեսությունից մինչև 12 ամիս ժամանակով բացակայող մշտական բնակչությունը՝ անկախ նրանից գտնվել են ՀՀ մեկ այլ բնակավայրում, թե ՀՀ-ից դուրս: Բացառություն են կազմում պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվողները:

Այսպիսով, **աշխատուժի** մեջ ներառվում են զբաղվածները և գործազուրկները, ովքեր ստեղծում են աշխատանքի շուկան (աշխատուժի առաջարկի մասով)՝ ապրանքների արտադրության և ծառայությունների տրամադրման համար:

Աշխատուժի մասնակցության մակարդակն աշխատուժի տեսակարար կշիռն է աշխատանքային ռեսուրսներում:

Աշխատուժի թերօգտագործումը բնութագրող ցուցանիշներն են.

<u>ԱԹ1.</u> Գործազրկության մակարդակ. [գործազուրկներ / աշխատուժ] x 100

<u>ԱԹ2.</u> Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության և գործազրկության զուգորդված մակարդակ.

[(ԱՏԹ + գործազուրկներ) / աշխատուժ] x 100

<u>ԱԹ3.</u> Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ.

[(գործազուրկներ + պոտենցիալ աշխատուժ) / (աշխատուժ + պոտենցիալ աշխատուժ)] x 100

<u>ԱԹ4.</u> Աշխատուժի թերօգտագործման ագրեգացված ցուցանիշ

[(ԱՏԹ + գործազուրկներ + պոտենցիալ աշխատուժ) / (աշխատուժ + պոտենցիալ աշխատուժ)] x 100

Գործազուրկ համարվում է 15-75 տարեկան անձը, ով հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում (ներառյալ հետազոտվող շաբաթը).

- չի ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք.
- ակտիվորեն փնտրել է աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց (դիմել է զբաղվածության պետական և (կամ) մասնավոր ծառայություն, աշխատանք է փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով).
- պատրաստ է եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա երկու շաբաթվա ընթացքում) անցնել աշխատանքի:

Ի հավելումն վերը նշվածի, գործազուրկների թվաքանակում, որպես կանոն, ներառվում է նաև անձը, ով հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում չի ունեցել և չի փնտրել աշխատանք, որովհետև արդեն գտել է աշխատանք կամ նախաձեռնել է սեփական գործ և կսկսի աշխատել առաջիկա 2 շաբաթվա ընթացքում:

Անձինք, ովքեր սովորաբար դասվում են տնտեսապես ոչ ակտիվ բնակչության խմբին (սովորող, ուսանող, կենսաթոշակառու, տնային տնտեսություն վարող և այլն) եթե հետազոտվող ժամանակաշրջանում բավարարում են վերոնշյալ պայմաններին, ապա ևս համարվում են գործազուրկ:

Գործազրկության մակարդակը գործազուրկների տեսակարար կշիռն է աշխատուժի թվաքանակում:

Հատկանշական է, որ պաշտոնապես գրանցված գործազրկության սահմանումը և համապատասխանաբար՝ նաև մակարդակը տարբերվում է վերը նշվածից:

Այսպես, պաշտոնապես գրանցված գործազրկության վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տվյալներն են:

Համաձայն «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենսդրության, աշխատանք փնտրողներ են համարվում 16 տարին լրացած այն գործունակ անձինք, ովքեր, **անկախ զբաղված լինելու հանգամանքից**, աշխատանք ստանալու նպատակով **դիմել են զբաղվածության պետական ծառայություն**:

Ըստ այդմ, **գործազուրկներ** (պաշտոնապես գրանցված) համարվում են աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձինք, ովքեր՝

ա) չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի տեսակների),

բ) աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում,

գ) պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի,

դ) ստացել են գործազուրկի կարգավիճակ:

Գործազրկության (աշխատանք փնտրելու) տևողությունը ժամանակի այն հատվածն է, որի ընթացքում քաղաքացին փնտրում է աշխատանք՝ անկախ աշխատանք փնտրելու եղանակից: Ընդունված է տարբերել հետևյալ երկու հասկացությունները.

- ✓ **ավարտված գործազրկության տևողություն**, որն աշխատանք փնտրելու պահից մինչ աշխատանքի տեղավորման պահն ընկած ժամանակահատվածն է:
- ✓ **անավարտ գործազրկության տևողություն**՝ աշխատանք փնտրելու պահից մինչ գործազրկության փաստն արձանագրելու պահն ընկած ժամանակահատվածն է:

Ընդունված է տարբերել նաև **երկարատև գործազրկության մակարդակ** հասկացությունը, որը բնութագրում է մեկ տարի և ավելի ժամանակով գործազրկության մեջ գտնվող անձանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում:

ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

Աշխատատեղերի մասին տեղեկատվության աղբյուրը 10 և ավելի վարձու աշխատող ունեցող կազմակերպություններից՝ սկսած 2018թ.-ից, եռամսյակային պարբերականությամբ ՀՎԿ կողմից հավաքագրվող «Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» վիճակագրական հաշվետվությունն է և տարեկան պարբերականությամբ իրականացվող ընտրանքային հետազոտությունը:

Տեղեկատվություն ներկայացնող կազմակերպությունների շրջանակը ձևավորվել է ՀՀ ՊԵԿ Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազայից՝ 2017թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ:

Աշխատատեղերի տեղեկատվության մեթոդաբանական հիմքերն են ԵՄ 2008թ. թիվ 453 կանոնակարգը[1] և Եվրոստատի *Թափուր աշխատատեղերի վիճակագրության մեթոդաբանությունը*[2]:

Ըստ այդմ, **աշխատատեղերի թիվն** աշխատողների փաստացի թվաքանակի (զբաղեցված աշխատատեղերի), այդ թվում՝ արտաքին համատեղությամբ աշխատողների և թափուր աշխատատեղերի հանրագումարն է՝ հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[1] EU Regulation (EC) No 453/2008 OF The European Parliament and of the Council of 23 April 2008 on quarterly statistics on Community job vacancies, since 2018 https: //eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A22010D0643

[2] https://ec.europa.eu/eurostat/ramon/statmanuals/files/KS-RA-10-027-EN.pdf

Կրճատված աշխատատեղերի թիվը աշխատատեղերի / հաստիքների կրճատումն է հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում (օրինակ՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխում, արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատում և այլն):

Նոր ստեղծված աշխատատեղ է համարվում հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանում առաջին անգամ ստեղծված կամ արդեն իսկ գործող կազմակերպությունում, օրինակ, արտադրության ընդլայնման, հերթափոխային աշխատանքների ավելացման, ինչպես նաև վերակազմավորման արդյունքում նոր / առաջին անգամ ստեղծված աշխատատեղը:

Նոր ստեղծված աշխատատեղը կարող է լինել զբաղեցված կամ՝ դեռևս ոչ, բայց դրանում պետք է նախատեսել աշխատող ընդունել ոչ ուշ քան հաշվետու եռամսյակին հաջորդող մեկ ամսվա ընթացքում:

Թափուր աշխատատեղերի թիվը գործատուի կողմից պահանջվող աշխատողների թվաքանակն է՝ նրանց լրիվ զբաղվածությունն ապահովելու պայմանով:

Թափուր է համարվում այն աշխատատեղը, որը հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում զբաղեցված չի եղել և գործատուն կազմակերպության սահմաններից դուրս հարմար թեկնածու գտնելու նպատակով իրականացրել է կոնկրետ միջոցառումներ՝ անցկացրել է հարցազրույցներ, ուղղակիորեն զբաղվել է թեկնածուի ընտրությամբ, թափուր հաստիքի մասին իրազեկել կամ հայտարարություն է տարածել աշխատանքի տեղավորման պետական, մասնավոր գործակալությունների միջոցով, զանգվածային լրատվամիջոցներով (համացանց, թերթեր, ամսագրեր, հեռուստա-ռադիո և այլն)՝ անկախ նրանից թափուր հաստիքը զբաղեցվելու է անորոշ, թե որոշակի ժամկետով, լրիվ, թե ոչ լրիվ աշխատանքային օրով կամ շաբաթով:

Թափուր է համարվում **նաև** երկարատև ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայողների, նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի հետ կապված արձակուրդում գտնվողների ժամանակավոր թափուր աշխատատեղերը, եթե դրանք փոխարինված չեն մեկ այլ աշխատողով և գործատուն իրականացրել է կոնկրետ միջոցառումներ թափուր պաշտոնի / հաստիքի համալրման համար:

Թափուր չի համարվում այն աշխատատեղը**.**

- ✓ որը հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում նախատեսված չի եղել համալրել.
- ✓ որի համալրման համար հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում որևէ կոնկրետ միջոցառում չի իրականացվել.

- ✓ որը թափուր է դարձել և միաժամանակ համալրվել հաշվետու / դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում.
- ✓ որը նախատեսված է զբաղեցնել մեկ օր տևողությամբ.
- ✓ որը նախատեսված է համալրել կազմակերպության աշխատողներից՝ ներսում.
- ✓ որը զբաղեցվելու է արձակուրդից (բոլոր տեսակների) վերադարձող աշխատողի կողմից.
- ✓ որը զբաղեցվելու է քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողի ներգրավմամբ.
- ✓ որի համար աշխատողի հետ պայմանագիր կնքվել է, բայց դեռևս աշխատանքը չի սկսվել:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2018թ-ից սկսած, **աշխատավարձի և աշխատողների թվաքանակի** վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ՊԵԿ *Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազան* է և ընդգրկում է 1 և ավելի վարձու աշխատող ունեցող կազմակերպությունները [3] : Այս բազայի շրջանակում վիճակագրական մարմնի կողմից դիտարկվող սկզբնական միավորը գործատուն է:

Անվանական աշխատավարձը վարձու աշխատողի համախառն (չհարկված) վարձատրության չափը բնութագրող այն մեծությունն է, որը կապված չէ ապրանքների և ծառայությունների գների հետ:

Միջին ամսական անվանական աշխատավարձը հաշվարկվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների (այսուհետ՝ աշխատավարձ) ընդհանուր գումարը հարաբերելով աշխատավարձի հաշվարկման համար կիրառվող աշխատողների միջին ամսական թվաքանակին:

Աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները վարձու աշխատողների կողմից փաստացի կատարված աշխատանքի դիմաց դրամական և (կամ) բնաիրային արտահայտությամբ հաշվարկված համախառն աշխատավարձն է՝ առանց օրենքով սահմանված պարտադիր հարկերը նվազեցնելու: ԱՎՀՎ-ի մեջ ներառվում են.

- ➢ աշխատած ժամանակահատվածի համար վարձատրությունը (ներառյալ՝ պարգևատրումները, լրավճարները, հավելավճարները), հատուցման վճարները,
- ➢ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում չաշխատած ժամանակահատվածի համար վարձատրությունը (ամենամյա և նպատակային արձակուրդները և այլն),
- ➢ միանվագ տրվող խրախուսական և այլ վճարները,

[3] http://www.armstat.am/file/article/sv_02_18a_142.pdf

- սննդի, բնակարանի, վառելիքի համար տրվող և այլ հարակից բնաիրային վճարները:

Անվանական աշխատավարձի ինդեքսը (աճի տեմպը) բնութագրում է դիտարկվող ժամանակահատվածում անվանական աշխատավարձի տոկոսային փոփոխությունը՝ բազիսային ժամանակահատվածի անվանական աշխատավարձի համեմատ:

Իրական աշխատավարձը բնութագրում է դիտարկվող ժամանակահատվածում անվանական աշխատավարձի գնողունակությունը, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով, ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից: Իրական աշխատավարձը **հաշվարկվում է** անվանական աշխատավարձը հարաբերելով նույն ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին:

Իրական աշխատավարձի ինդեքսը հաշվարկվում է անվանական աշխատավարձի ինդեքսը հարաբերելով նույն (կամ բազիսային) ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Տնային տնտեսությունը մեկ անձ է կամ անձանց խումբ, որոնց համար ընդհանուր է բյուջեն և բնակվելու վայրը: Ընդ որում, բարեկամական կապերը պարտադիր չեն համարվում:

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը ՀՀ ՎԿ կողմից տվյալների հավաքման առավել կարևոր գործունեության տեսակներից է: Նման հետազոտությունների միջոցով տնային տնտեսությունների և առանձին անհատների կենսամակարդակի վերաբերյալ հավաքվում է բավականին հարուստ տեղեկատվություն, ինչը հնարավորություն է ընձեռում հանրությանը արդիական տեղեկատվություն տրամադրել երկրում աղքատության մակարդակի փոփոխության վերաբերյալ: ՏՏԿԱՀ առաջին անգամ Հայաստանում անցկացվել է 1996թ.-ին:

2004թ.-ից ՏՏԿԱՀ մեթոդաբանությունը զգալիորեն բարելավվել է: Ի մասնավորի, արդիականացվել է հետազոտության ընտրանքի շրջանակը՝ օգտագործելով 2001թ.-ի մարդահամարի տեղեկատվական բազան, ընդլայնվել է ընտրանքի չափը՝ ապահովելով տվյալների ներկայացուցչականությունը մարզային կտրվածքով, վերանայվել է ՏՏԿԱՀ հարցաշարը՝արտացոլելով տնտեսական և սոցիալական փոփոխությունները:

Սկսած 2012թ. ՏՏԿԱՀ իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ տարեկան **5184** տնային տնտեսությունների ընտրանքի չափով:

2017թ.-ին պետական բյուջեից բացի հետազոտությունը ֆինանսավորվել է նաև ՀԲ-ի կողմից, ինչը թույլ տվեց ընտրանքի չափը հասցնել տարեկան **7776** տնային տնտեսությունների:

ՏՏԿԱՀ ընտրանքի ձևավորումը

ՏՏԿԱՀ ընտրանքի ձևավորման համար հիմք է հանդիսանում հանրապետության բոլոր մասնավոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան, որը ստեղծվել է 2011թ.-ի ՀՀ մարդահամարի արդյունքների հիման վրա՝ Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ: Ընտրանքի ձևավորման համար օգտագործվել է ներկայացուցչական հավանականային ընտրանքի մեթոդ:

Ընտրանքը կազմելու համար գլխավոր համակցությունը շերտավորվել է (բաժանվել է) 32 ստրատայի, որից 12-ը Երևանի վարչական շրջաններն են: Մարզի մակարդակով բոլոր բնակավայրերը բաժանվել են երկու կատեգորիաների՝ քաղաքներ և գյուղեր: Բոլոր մարզերը և ք.Երևանը, ինչպես նաև բոլոր գյուղական և քաղաքային բնակավայրերն ընտրանքային համակցության մեջ ներառվել են ըստ երկրի բոլոր տնային տնտեսությունների կազմում այդ բնակավայրերում բնակվող տնային տնտեսությունների համամասնության: Համաձայն 2018թ.-ի ՏՏԿԱՀ ընտրանքի, քաղաքային բնակավայրերում ընտրվել է ամսական 30, իսկ գյուղական բնակավայրերում՝ 18 հաշվային տեղամաս:

Երկրորդ փուլում ընտրվել են հետազոտվող տնային տնտեսությունները: Յուրաքանչյուր ամիս հետազոտվել է 432 տնային տնտեսություն, որից 270-ը՝ քաղաքային և 162-ը՝ գյուղական բնակավայրերից: Յուրաքանչյուր ամիս դաշտային աշխատանքներն իրականացրել են 48 հարցազրուցավար, որոնցից յուրաքանչյուրի ծանրաբեռնվածությունը կազմել է ամսական 9 տնային տնտեսություն: 2018թ.-ին ընտրվել է 5 184 տնային տնտեսություն, որից 3 240-ը՝ քաղաքային, իսկ 1 944-ը՝ գյուղական բնակավայրերից: Հետազոտության տվյալներն ապահովում են նվազագույն ներկայացուցչականություն՝ մարզային կտրվածքով:

Հետազոտության իրագործման համար օգտագործվել են հետազոտության հետևյալ գործիքները՝ «Կենսապայմանների ամբողջացված հետազոտության» **հարցաթերթ**, «Ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների» **օրագիր**, «Հարցազրուցավարի **ուղեցույց**»:

«Կենսապայմանների ամբողջացված հետազոտության» **հարցաթերթը** լրացվում է հարցազրուցավարի կողմից՝ ամսվա ընթացքում առնվազն հինգ անգամ տնային տնտեսություն կատարած իր այցելությունների ժամանակ: Տնային տնտեսության գլխավորի կամ այլ բանիմաց չափահաս անդամի հետ անմիջական հարցազրույցի ընթացքում հարցազրուցավարը հավաքում է տեղեկատվություն տնային տնտեսության կազմի, բնակարանային պայմանների, տնային տնտեսության անդամների զբաղվածության, կրթական մակարդակի և առողջական վիճակի, հողամասի, անասունների և գյուղտեխնիկայի առկայության ու օգտագործման, տնային տնտեսությունների միջև դրամական և ապրանքային հոսքերի և այլնի մասին:

«Ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների» **օրագիրը** լրացնում է տնային տնտեսությունը՝ մեկ ամսվա ընթացքում: Ամեն օր տնային տնտեսությունը գրանցում է սննդամթերքի, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կատարած իր բոլոր ծախսերը՝ տալով դրանց մանրամասն նկարագիրը, օրինակ՝ գնված սննդամթերքի համար նշվում է ապրանքի անվանումը, քաշը, արժեքը և այն վայրը, որտեղից գնվել է այդ ապրանքը: Նշվում է նաև ինչպես սեփական հողից և գյուղատնտեսական կենդանիներից ստացված և օգտագործված սննդամթերքը, այնպես էլ այլ աղբյուրներից (նվեր, մարդասիրական օգնություն) ստացված սննդամթերքը: Օրագրում տնային տնտեսությունը նշում է նաև ամսվա ընթացքում ստացված եկամուտները: 2018թ.-ին հետազոտված յուրաքանչյուր տնային տնտեսություն, մեկ ամսվա ընթացքում, օրագիրը լրացնելու համար ստացել է 1500 դրամ: Մուտքագրված տեղեկատվության հիման վրա ստեղծվել է տվյալների բազա՝ օգտագործելով տվյալների մուտքագրման համար հատուկ ծրագրային փաթեթ:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Տնային տնտեսության եկամուտը հանդիսանում է բնակչության կենսամակարդակը գնահատող կարևորագույն ցուցանիշներից մեկը: Տնային տնտեսության ամբողջական եկամուտը կազմված է դրամական եկամուտների բոլոր բաղադրիչներից և այնպիսի ոչ դրամական եկամուտների բաղադրիչներից, ինչպիսիք են՝ տնային տնտեսության կողմից սպառվող (օգտագործվող), սեփական տնտեսությունից ստացված սննդամթերքը՝ դրամով արտահայտված, ինչպես նաև բարեկամներից կամ այլ անձանցից անվճար ստացված ոչ պարենային ապրանքները և ծառայությունները:

Տնային տնտեսության **դրամական եկամուտները** ներառում են՝

- ✓ տնային տնտեսության անդամների կողմից որպես աշխատանքի վարձատրություն ստացված գումարները (չեն հաշվառվում եկամտահարկը և աշխատավարձից այլ պարտադիր սոցիալական վճարումները),
- ✓ ինքնազբաղվածության արդյունքում կամ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված գումարները,
- ✓ սոցիալական տրանսֆերտները (կենսաթոշակները, դրամական սոցիալական աջակցությունը, ներառյալ գործազրկության նպաստը, ընտանեկան նպաստը, երեխայի ծննդյան և խնամքի նպաստները և այլ նպաստներ),
- ✓ մասնավոր տրանսֆերտները,
- ✓ վարձակալության տրված սեփականության դիմաց վարձավճարները,
- ✓ տոկոսավճարները, դիվիդենտները, շահաբաժինները, բաժնետոմսերի և այլ արժեթղթերի վաճառքից ստացված գումարները,
- ✓ անշարժ գույքի և տան ունեցվածքի, գյուղատնտեսական կենդանիների, սեփական տնտեսությունից ստացված մթերքի վաճառքի գումարները,
- ✓ կրթաթոշակների, ինչպես նաև բարեկամների և այլ անձանց կողմից տրամադրված օժանդակության կամ այլ դրամական եկամուտների տեսքով ստացված գումարները:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՌՈՒՄԸ

Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է **սպառման ագրեգացված ցուցանիշը**: Միջազգային պրակտիկայում ընդունված է, որ սպառումը եկամուտների համեմատությամբ ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ՝ հատկապես ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում: Սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվում է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությամբ ստացված տվյալների հիման վրա և ներառում է հետևյալ բաղկացուցիչները.

(ա) **սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը**, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը, և

(բ) **երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը**:

Պարենային ապրանքների սպառումը ներառում է տանը և տանից դուրս (այսինքն ռեստորաններում և այլն) սպառված սննդամթերքը, ինչպես նաև

բնամթերային տեսքով ստացված սննդամթերքի՝ սեփական արտադրության սննդի, որպես նվեր և օգնություն ստացված սննդի, և մարդասիրական օգնության տեսքով ստացված սննդի սպառումը:

Ոչ պարենային ապրանքների սպառումը ներառում է հետևյալ խմբերը՝ ոգելից խմիչքներ և ծխախոտ, հագուստ և կոշկեղեն, կենցաղային իրեր, տրանսպորտային ծախսեր, կոմունալ ծառայություններ, հանգստի, կրթության, առողջապահության հետ կապված ծախսեր և երկարաժամկետ գործածության ապրանքների հաշվարկային արժեքը: Այն նաև ներառում է բնաիրային տեսքով ոչ պարենային ապրանքների սպառումը, ինչպես օրինակ անվճար ստացված ոչ պարենային ապրանքներն ու ծառայությունները (այսինքն՝ մարդասիրական օգնությամբ բնաիրային տեսքով ստացված ոչ պարենային ապրանքները, նվերները, տնային տնտեսության անդամների կողմից տրամադրված ոչ պարենային ապրանքներն ու ծառայությունները):

Երկարաժամկետ օգտագործման ապրանքների արժեքի գնահատումն, այսինքն տնային տնտեսության տնօրինման տակ գտնվող երկարաժամկետ գործածության ապրանքների սպառման արժեքը, ներառվում է սպառման ագրեգատի մեջ: Բնակելի տարածքի պայմանական հաշվարկային արժեքը, այդ բնակարանում ապրողի/ սեփականատիրոջ օգուտն այդ բնակարանից՝ որպես սպառման բաղադրիչ, չի գնահատվում՝ համապատասխան տվյալների անբավարարության պատճառով:

Այսպիսով, տնային տնտեսությունների սպառողական ծախսերը ներառում են սննդի, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների դիմաց կատարված ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական ծախսերը:

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

<u>Աղքատության գիծ</u>

Աղքատության գիծը սահմանվում է որպես նվազագույն սպառողական զամբյուղի դրամական արժեք, որը հասարակությունում ձևավորված (փաստացի դրսևորված) կյանքի նվազագույն մակարդակ ապահովող ապրանքների ու ծառայությունների համադրությունն է: Զամբյուղի կազմն ու կառուցվածքը հիմնված է բնակչության կողմից փաստացի ձևավորված սպառման վրա՝ ստացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքում, որի արժեքի տատանումներն արտահայտվում են սպառողական գների փոփոխություններով:

Նվազագույն սպառողական զամբյուղը բաղկացած է երկու մասից՝ նվազագույն պարենային զամբյուղ, որը համապատասխանում է հիմնական սննդամթերքի

գումարային համարժեքին և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների արժեք: Ըստ այդմ, աղքատության գիծը ներառում է երկու բաղադրիչներ՝

- ✓ Աղքատության պարենային գիծ (նվազագույն պարենային զամբյուղի արժեք),
- ✓ Ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների արժեք:

Աղքատության պարենային գծի գնահատումը

Աղքատության պարենային գիծը գնահատելու համար կիրառվում է ՀԲ մեթոդաբանությունը, որը հիմնված է *Հիմնական պահանջների արժեք* մոտեցման վրա: Աղքատության պարենային գծի, որպես նվազագույն պարենային զամբյուղի արժեքի գնահատման մեթոդաբանությունը հիմնված է **սննդակարգի նվազագույն անհրաժեշտ կալորիականության** գնահատման վրա:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպության (ՊԳԿ) հետ համագործակցելով՝ շարունակաբար վերանայում է մարդու կողմից սպառվող սննդանյութերի նկատմամբ պահանջի և երաշխավորվող սննդանյութերի օգտագործման վերաբերյալ միջազգային նոր հետազոտություններն ու տեղեկատվությունը: Այդ սննդանյութերն են՝ սպիտակուցները, ածխաջրերը, ճարպերն ու լիպիդները, վիտամինների շարքը, բազմաթիվ հանքային նյութերն ու չնչին քանակությամբ էլեմենտները:

Որոշակի սեռատարիքային խմբի համար մեկ անձին բաժին ընկնող սննդային էներգետիկ արժեքը համարվում է համարժեք, եթե առողջ կյանքի և ֆիզիկական թեթև գործունեության պահպանման կարիքներն ապահովված են: Ամբողջ բնակչության նվազագույն էներգետիկ պահանջը բնակչության տարբեր սեռատարիքային խմբերի նվազագույն էներգետիկ պահանջի կշռված միջինն է:

Հայաստանի համար անհրաժեշտ միջին կալորիականությունը հաշվարկվել է 2004թ. ՀՎԿ-ի կողմից՝ ՀԲ աջակցությամբ, օգտագործելով տարբեր ժողովրդագրական խմբերի համար ԱՀԿ կողմից անհրաժեշտ կալորիականության համար սահմանված չափորոշիչները և այդ ժողովրդագրական խմբերի բնակչության համամասնության մասին տեղեկատվությունը: Այսպիսով, Հայաստանի համար օրական մեկ շնչի հաշվով անհրաժեշտ միջին կալորիականությունը գնահատվել է 2 232 կկալ:

Նվազագույն պարենային զամբյուղի համար որպես բազիսային բնակչություն են դիտարկվում չափահաս-համարժեքի երկրորդ, երրորդ և չորրորդ սպառողական դեցիլները: **Աղքատության պարենային գիծը**, որպես նվազագույն պարենային

զամբյուղի արժեք, սահմանվեց բազիսային բնակչության փաստացի սպառողական օրինաչափությունների համաձայն, այսինքն՝ նվազագույն սպառողական զամբյուղի բաղադրությունը բազիսային բնակչության պարենային սպառման կառուցվածքի հետ նույնատեսակ է:

Նվազագույն պարենային զամբյուղի արժեքը որոշելու համար օրական 2 232 կալորիան այնուհետև բաշխվել է սննդամթերքի «առավել կարևոր» տեսակների միջև: Այս նվազագույն կալորիականությամբ սննդակարգը հաջորդիվ գնահատվել է 2009 թվականի ազգային տարեկան միջին գներով՝ օգտագործելով սննդամթերքի յուրաքանչյուր տեսակի կալորիայի արժեքը: Նվազագույն պարենային զամբյուղի դրամական արժեքը հաշվարկվում է որպես այս սննդակարգի ընդհանուր արժեք:

Ներկայում աղքատության պարենային գիծը բաղկացած է 106 հիմնական սննդատեսակից և ոչ ալկոհոլային խմիչքներից, ունի 2232 կկալ օրական մեկ շնչի հաշվով էներգետիկ արժեք, հիմնված է չափահասին համարժեք սպառման 2-4-րդ դեցիլների սպառման համամասնությունների վրա և ունի հետևյալ հիմնական բաղադրիչները.

Աղյուսակ 1. Աղքատության պարենային գծի բաղադրիչները

Բաղադրիչը	**Տոկոսը**	**Բաղադրիչը**	**Տոկոսը**
Հաց, հացամթերք	32,4	Շաքար, ջեմ	3,8
Կաթ, պանիր, ձու	18,5	Սուրճ, թեյ, կակաո	3,3
Բանջարեղեն	17,4	Սննդամթերք	1,1
Միս	10,2	Ձուկ	0,5
Ձեթ, ճարպ	8,1	Ոչ ալկոհոլային խմիչք	0,4
Միրգ	4,3		

Ոչ պարենային ծախսերի գնահատումը

Աղքատության ընդհանուր գիծը գնահատելու համար անհրաժեշտ է նվազագույն պարենային ծախսերի ավելացնել նաև ոչ պարենային ապրանքների պահանջն արտացոլող դրամային մեծությունը: Ընդհանուր առմամբ, միջազգային պրակտիկայում կիրառվում են ոչ պարենային բաղադրիչի գնահատման մի քանի մեթոդներ, որոնք ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ որոշ սահմանափակումներ:

Հայաստանում փաստացի սպառման հիման վրա ոչ պարենային սպառման մասնաբաժնի սահմանման երկու պարզ և թափանցիկ մեթոդ է կիրառվում: Ընդհանուր

աղքատության գծի ոչ պարենային մասնաբաժինը գնահատվում է **պարենային ծախսերի մեթոդի** (ՊԾՄ) և **սպառողական զամբյուղի մեթոդի** (ՍԶՄ) կիրառմամբ[4]:

Համաձայն ՊԾՄ-ի, առաջին քայլով ընտրվում են այն անձինք, ում պարենային սպառումը մոտ է աղքատության պարենային գծին: Այնուհետև, սպառողների այս խմբի հիման վրա հաշվարկվում է ոչ պարենային մասնաբաժինն ու համընդհանուր աղքատության գիծը: Այստեղից էլ հաշվարկվում է սպառման այն մասնաբաժինը, որը հատկացվում է ոչ պարենային սպառման ապրանքներին: Ընդ որում, այդ մասնաբաժինը կարող է էլ ավելի տրոհվել՝ առանձնացնելով ոչ պարենային ապրանքների և ծառայությունների արժեքը5:

Երկրորդ մեթոդաբանության համաձայն, ըստ ՍԶՄ-ի, պարենային մասնաբաժինը հաշվարկվում է որպես այն տնային տնտեսությունների պարենային միջին մասնաբաժինների «համընդհանուր միջին», որտեղ մեկ չափահասի հաշվով ընդհանուր սպառումն ընկած է աղքատության պարենային գծի ±2-10% միջակայքում: Սա հանգեցնում է աղքատության երկու գծերի գնահատման՝ ստորին և վերին:

Աղքատության այն գիծը, որը ներառում է ոչ պարենային մասնաբաժինը համաձայն ՊԾՄ-ի, կոչվում է **աղքատության վերին գիծ**: Աղքատության վերին գիծն ունի հետևյալ կառուցվածքը.

- Պարենային ապրանքներ և ոչ ոգելից խմիչք – 56.5%
- Ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ – 43.5%

Աղքատության այն գիծը, որն ըստ ՍԶՄ-ի ներառում է ոչ սննդային մասնաբաժինը, կոչվում է **աղքատության ստորին գիծ**: Այն ունի հետևյալ կառուցվածքը.

- Պարենային ապրանքներ և ոչ ոգելից խմիչք – 69,3%
- Ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ – 30,7%

<u>Աղքատության հիմնական ցուցանիշները</u>

ՀՀ-ում աղքատությունը գնահատվում է ըստ աղքատության մակարդակի, աղքատության խորության և սրության ցուցանիշների: Աղքատության մակարդակի

---

[4] Այս մեթոդները մշակվել և առաջարկվել են ՀԲ կողմից, 2002թ.:

[5] Ավելի ճշգրիտ, պարենային մասնաբաժինը հաշվարկվում է որպես այն տնային տնտեսությունների պարենային մասնաբաժինների «համընդհանուր միջին», որոնց մեկ չափահասի հաշվով պարենային սպառումն ընկած է աղքատության պարենային գծի (ոչ պարամետրային գնահատական) ± 2-10% միջակայքում:

ամենապարզ և առավել հաճախ կիրառվող գնահատականը **աղքատների ընդհանուր թվաքանակի համաթիվն է**, որը մեկ չափահաս անդամի հաշվով համարժեք սպառման մակարդակով աղքատության գծից ցած գտնվող անհատների հարաբերությունն է:

Աղքատության խորության տոկոսային գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և աղքատ և ոչ աղքատ) համախմբելու աղքատության գծի այդ տոկոսին համարժեք ռեսուրսներ և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսականորեն կվերացվեր, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին: Եթե հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, ապա աղքատության խորությունը ցույց է տալիս աղքատության պակասուրդը, այսինքն՝ այն ցույց է տալիս, թե որքանով է աղքատների միջին սպառումը ցածր աղքատության գծից:

Աղքատության սրությունը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը. այն հաշվի է առնում, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատների սպառումը շատ է մոտ աղքատության գծին:

Ընդհանրապես, աղքատության միտումները նկարագրվում են աղքատության բոլոր երեք գնահատականների միջոցով, սակայն աղքատության պատկերի վերլուծությունները հիմնականում կատարվում են **աղքատության մակարդակի գնահատականի** հիման վրա:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Եկամուտների կենտրոնացման գործակիցը (Ջինի ինդեքսը) բնակչության եկամուտների բաշխման փաստացի ծավալի շեղումն է դրանց հավասարաչափ բաշխման գծից: Հավասարաչափ բաշխման դեպքում այն հավասար է զրոյի, բացարձակ անհավասարության պայմաններում այն հավասար է մեկի:

Տնային տնտեսությունների ծախսերի ցուցանիշներն առավել վստահելի են եկամուտների համեմատ, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից (եկամուտները չբացահայտելու հակվածության էֆեկտը):

Բնակչության եկամուտների կամ ծախսերի տարբերակման համար հաշվարկվում է նաև **«բևեռային» քվինտիլների հարաբերության գործակիցը**: Այն է՝ 20% առավել

ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակի հարաբերությունը 20% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին:

Ի հավելումն, կիրառվում է նաև այսպես կոչված **«բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցը՝** 10% առավել ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակի հարաբերությունը 10% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին: Ընդ որում՝ «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցը ավելի ադեկվատ ցուցիչ է համարվում, քան քվինտիլային հարաբերության գործակիցը:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերության ոլորտի դիտարկումներում առավել հաճախ կիրառվող վիճակագրական ցուցանիշների համակարգը ներառում է արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան՝ ամբողջությամբ և ըստ տնտեսական գործունեության տեսակների, մարզերի և ք. Երևանի, արդյունաբերական արտադրանքի կարևոր տեսակների արտադրությունը, արդյունաբերության տեխնիկական մակարդակի վիճակը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության, սպառման, էլեկտրակայանների հզորության դինամիկան, էլեկտրահաշվեկշիռն ու էներգետիկ հաշվեկշիռը:

Արդյունաբերական արտադրանքի ծավալն արժեքային արտահայտությամբ արդյունաբերական կազմակերպությունների (ներառյալ առանձնացված ստորաբաժանումները) կողմից թողարկված արտադրանքի, կատարված արդյունաբերական բնույթի աշխատանքների և ծառայությունների ծավալների հանրագումարն է: Արտադրանքի ծավալի մասին տվյալները բերվում են ընթացիկ գներով՝ առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

Կազմակերպության կողմից թողարկված արտադրանքի ծավալը որոշվում է առանց **ներքին շրջանառության արժեքի**: Կազմակերպության ներքին շրջանառություն է համարվում արտադրված պատրաստի իրերի և կիսաֆաբրիկատների այն մասի արժեքը, որն օգտագործվում է տվյալ կազմակերպության կողմից՝ սեփական արդյունաբերաարտադրական կարիքների համար:

Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը բնութագրում է արտադրանքի ծավալի դինամիկայի փոփոխությունն արժեքային արտահայտությամբ: Համադրելի գներով արտադրանքի ծավալը գնահատվում է արդյունաբերողների գների ինդեքսի հիման վրա:

Իրացված արտադրանքի ծավալն այն սեփական արտադրության արժեքն է, որ հաշվետու ժամանակաշրջանում փաստացի բեռնառաքվել (հանձնվել) է սպառողներին (ներառյալ այն արտադրանքը, որ ակտով տեղում հանձնվել է պատվիրատուին), կատարված աշխատանքներն ու ծառայությունները, որ ընդունել է պատվիրատուն, անկախ այն բանից՝ վճարը մուտքագրվել է արտադրողի հաշվին, թե ոչ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը բնեղեն արտահայտությամբ, որպես կանոն, բերվում է ըստ արտադրանքի համախառն թողարկման, այսինքն ներառյալ տվյալ կազմակերպության ներսում արդյունաբերա-արտադրական կարիքների համար ծախսված և պատվիրատուի հումքից թողարկված արտադրանքը:

Էներգետիկ հաշվեկշիռը տվյալ ժամանակահատվածում արտադրված, ներմուծված/արտահանված և պահուստավորված առաջնային և երկրորդային էներգակիրների, դրանց փոխակերպման, կորուստների և վերջնական սպառման քանակական բնութագիրն է՝ արտահայտված մեկ միասնական (համադրելի) չափի միավորով՝ կիլոտոննա նավթային համարժեքով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բնակչության տնտեսություններ են՝ անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունները, այգեգործական ընկերությունների անդամների անհատական տնտեսությունները և քաղաքաբնակների անհատական տնտեսությունները, որոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքի ծավալն է արժեքային արտահայտությամբ:

Գյուղատնտեսական արտադրանքի **ֆիզիկական ծավալի ինդեքսի** հաշվարկման համար օգտագործվում է դրա ծավալի ցուցանիշը՝ համադրելի գներով:

Բուսաբուծության արտադրանքը ներառում է տվյալ տարվա բերքից ստացված մթերքի արժեքը, երիտասարդ բազմամյա տնկարկների աճեցման արժեքը և տարեսկզբից մինչև տարեվերջ անավարտ արտադրության արժեքի փոփոխությունը:

Անասնաբուծության արտադրանքը ներառում է գյուղատնտեսական կենդանիների, թռչունների և այլ կենդանիների աճեցման, կաթի, բրդի, ձվի, մեղրի և այլնի արտադրության արժեքը:

Ընդհանուր հողային մակերեսը պետական սահմանի ներսում ցամաքի մակերեսային տարածքն է՝ ներքին ջրերի հետ մեկտեղ: **Գյուղատնտեսական նշանակության հողերը** գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար օգտագործվող հողեր են՝ մշտական մշակաբույսերի (բազմամյա տնկարկների) տակ գտնվող հողերը, վարելահողերը, խոտհարքները, արոտավայրերը և այլ հողերը:

Վարելահողերը գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքի (ներառյալ բազմամյա խոտաբույսերի ցանքերը և մաքուր ցելերը) համար օգտագործվող հողատեսքերն են:

Մշտական մշակաբույսերի հողերը բազմամյա տնկարկների, ինչպես նաև տնկարանների համար օգտագործվող հողեր են:

Խոտհարքերը խոտհնձի համար օգտագործվող գյուղատնտեսական հողատեսքն է:

Արոտավայրերը գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար պիտանի և խոտհարքների տակ չօգտագործվող բնական կամ ցանովի խոտերի տակ գտնվող հողատեսքն է:

Համախառն բերքը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքն է հավաքված ինչպես հիմնական, այնպես էլ կրկնակի, ենթացանքերից և միջշարքային ցանքատարածություններից:

Բերքատվությունը (1 հա հաշվով ստացված գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքն է) հաշվարկվում է բերքահավաքի տարածքի նկատմամբ:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ որոշվում է տարեկան հաշվառման հիման վրա և ներառում է համապատասխան տեսակի կենդանիների սեռատարիքային բոլոր խմբերի գլխաքանակը:

Գյուղատնտեսական կենդանիների և թռչնի իրացումը (մսի արտադրություն) ներառում է սպանդի համար բոլոր տեսակի կենդանիների ու թռչունների վաճառքը պետությանը, շուկայում, առևտրական ցանցի միջոցով, բարտերային փոխանակումը, սեփական սպառումը և այլն:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շինարարության ոլորտում վիճակագրական դիտարկումների առանցքային ցուցանիշ է հիմնական միջոցը: **Հիմնական միջոցներ են հանդիսանում** շենքերը, շինությունները, մեքենաներն ու սարքավորանքները (բանվորական և ուժային մեքենաներն ու սարքավորանքները, չափիչ և կարգավորիչ փորձասարքերն ու հարմարանքները, լաբորատոր սարքավորանքները, հաշվողական տեխնիկան), փոխադրամիջոցները և հիմնական միջոցների այլ տեսակները:

Հիմնական միջոցների մեջ ներառվում են նաև պետական և մասնավոր հատվածների կազմակերպությունների բոլոր հիմնական միջոցները, ինչպես նաև ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները՝ բնակելի տները, բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների, ինչպես նաև գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների տնտեսական շենքերի հիմնական միջոցները և այլն:

Հիմնական միջոցների գործարկման ցուցանիշի մեջ ներառվում է շինարարությունն ավարտած և շահագործման հանձնված կազմակերպությունների, շինությունների ու կառույցների արժեքները, նոր շահագործվող մեքենաների, բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների, սարքավորանքների (մոնտաժման կարիք ունեցող և չունեցող, շինարարության նախահաշվի մեջ մտնող և չմտնող) արժեքները, գործիքների, գույքի և այլ առարկաների արժեքները, որոնք հաշվառված են հիմնական միջոցների մեջ, հողերի ոռոգման և չորացման աշխատանքների արժեքը, հողերի բարելավման հետ կապված ծախսերը և հիմնական միջոցների արժեքի մեծացման հետ կապված այլ ծախսերը:

Շինարարության ծավալում ընդգրկվում են բոլոր ոլորտներում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, առևտուր և այլ) իրականացված **շինմոնտաժային**՝ նոր շինարարության, գործող շենքերի և շինությունների վերակառուցման, ընդլայնման և տեխնիկական վերազինման, ամրացման, վերանորոգման և տարբեր տեսակի սարքավորանքների տեղադրման աշխատանքների արժեքները, ինչպես նաև սարքավորանքների, գործիքների, գույքի ձեռք բերման համար կատարված ծախսերը և այլ շինարարական աշխատանքները:

Շինարարության ծավալին վերաբերում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքների ծախսերը, շինարարության նախահաշվով նախատեսված սարքավորանքների մոնտաժի, մոնտաժման կարիք ունեցող կամ չունեցող սարքավորանքների, շինարարության նախահաշվի մեջ մտցվող արտադրության

գործիքների և տնտեսական գույքի, շինարարության նախահաշվի մեջ չմտնող մեքենաների և սարքավորանքների ձեռք բերման ծախսերը, այլ շինարարական աշխատանքների ծախսերը:

Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը բաղկացած է բնակելի մակերեսից և օժանդակ տարածքների մակերեսից: Բնակարանային և հյուրանոցային տիպի բնակելի շենքերի, ինչպես նաև բնակարաններ պարունակող ոչ բնակելի շենքերի բնակելի մակերեսի մեջ ընդգրկվում է բնակարանի ներսում գտնվող բնակելի սենյակների՝ ճաշասենյակների, ննջասենյակների, մանկական սենյակների և այլ բնակելի սենյակների մակերեսը:

Բնակարանային և հյուրանոցային տիպի բնակելի շենքերի, ինչպես նաև ոչ բնակելի շենքերի օժանդակ տարածքների թվին են պատկանում բնակարանի ներսում գտնվող խոհանոցները, միջանցքները, սանհանգույցները, լողասենյակները, հանդերձարանները, պահեստները, պահարանները: Օժանդակ տարածքների մեջ են մտնում փակ պատշգամբները, լոջաները, երկարավուն պատշգամբները, եթե դրանք նախատեսված են նախագծերի տեխնիկատնտեսական ցուցանիշներով:

Գործարկված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի մեջ չեն ներառվում նախասրահների, նախամուտքերի, աստիճանավանդակների, ընդհանուր միջանցքների մակերեսները, ինչպես նաև բնակելի տներին կից կառուցված ոչ բնակելի տարածքների մակերեսները:

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Տրանսպորտը ներառում է ընդհանուր և ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակները:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տնտեսության հատվածների և բնակչության բեռների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման երթուղիներով ուղևորների փոխադրումները:

Ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տվյալ կազմակերպության բեռների փոխադրումները (ավտոմոբիլային տրանսպորտի համար՝ ավտոտրանսպորտային միջոցներով, երկաթուղային տրանսպորտի համար՝ ոչ ընդհանուր օգտագործման մերձատար ուղիներով), ինչպես նաև ավտոտրանսպորտով տվյալ կազմակերպության աշխատողների փոխադրումները (ներտնտեսական և ծառայողական տրանսպորտ):

Ընդհանուր օգտագործման տրանսպորտի հիմնական ցուցանիշներն են. բեռների փոխադրումների ծավալը (տոննա), բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետր), ուղևորների փոխադրումների ծավալը (ուղևոր) ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետր):

Բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետրերով) հաշվարկվում է փոխադրվող բեռների յուրաքանչյուր խմբի քաշի (տոննա) և այդ բեռնափոխադրման հեռավորության արտադրյալների հանրագումարով:

Ուղևորափոխադրումների ծավալում ներառվում է տրանսպորտային միջոցներով փաստացի փոխադրված ուղևորների թվաքանակը (ներառյալ անվճար երթևեկության իրավունքներից օգտվող ուղևորները):

Ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետրերով) հաշվարկվում է փոխադրված ուղևորների թվաքանակի և մեկ ուղևորի փոխադրման միջին հեռավորության արտադրյալների հանրագումարով:

Փոստային և սուրհանդակային ծառայությունները ներառում է՝

- ✓ ազգային փոստի բաժանմունքներից փոստի, ծանրոցների, ծանրոցածրարների (բանդերոլների) փաթեթների հանում, տեսակավորում, բաշխում, տեղավորում և տեղ հասցնում,
- ✓ «ցպահանջ» թղթակցության մշակում,
- ✓ փոստային նամականիշերի, բացիկների, ծրարների վաճառք,
- ✓ պայմանագրային հիմունքներով պարբերական մամուլի տարածում,
- ✓ հատուկ կապ և կառավարական սուրհանդակային գործունեություն (ֆելդեգերային ծառայություն),
- ✓ ազգային փոստից բացի այլ կազմակերպությունների կողմից նամակների, ծանրոցների և ծանրոցածրարների (բանդերոլների) հանում, տեղափոխում, տեղ հասցնում:

Կապ

Հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում հատվածը ներառում է հեռուստառադիոծրագրերի՝ նորությունների, ժամանցային ծրագրերի, բանավեճերի ու համանման այլ ծրագրերի կազմման և հեռարձակման կամ տարածման իրավունքով ձեռք բերված պատրաստի հեռուստառադիոծրագրերի հեռարձակման հետ կապված գործունեությունը, ինչպես նաև տվյալների փոխանցումը համացանցով, սովորաբար երբ այն իրականացվում է հեռուստառադիոհեռարձակման համակարգում:

Հեռահաղորդակցության կապի գործունեությունը ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը: Սույն ծառայությունները մատուցվում են լարային, անլար և արբանյակային հեռահաղորդակցական համակարգերի միջոցով:

Լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններն են՝

- ✓ հեռախոսային ցանցի
- ✓ հեռագրական կապի
- ✓ ինտերնետ հասանելիության,
- ✓ մալուխային հեռուստատեսային համակարգերի:

Անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններն են՝

- ✓ բջջային հեռախոսակապի
- ✓ ռադիոալիքային (փեյջինգային) կապի
- ✓ շառավղային գործունեության կապի
- ✓ ինտերնետ հասանելիության:

Արբանյակային կապի ծառայությունները ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցման համար արբանյակային կապն ապահովող միջոցների սպասարկումն ու շահագործումը կամ այդ կապից օգտվելու հնարավորության տրամադրումը, հեռուստաալիքներով ու հեռուստատեսային կայաններից և ցանցերից կամ ռադիոցանցերից ստացված ձայնա-, տեսաձրագրերի, տեքստերի փոխանցումն անմիջական սպառողին, ինչպես նաև ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը՝ արբանյակային հեռահաղորդակցական կապն ապահովող օպերատորի կողմից:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առևտրի շրջանառությունը ներառում է մանրածախ և մեծածախ առևտրի շրջանառությունը, նաև՝ ավտոմեքենաների առևտուրը: Առևտրի շրջանառության ցուցանիշը հաշվարկվում է առանց ավելացված արժեքի հարկի և այլ անուղղակի հարկերի:

Մանրածախ առևտրի շրջանառությունը վերջնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար նախատեսված սպառողական ապրանքների վաճառքն է արժեքային արտահայտությամբ: Մանրածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ձևավորվում է ըստ առևտրի օբյեկտների՝ խանութների, կրպակների, առևտրի այլ օբյեկտների (շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ առևտրի

կետերի), ինչպես նաև առևտրի իրականացման վայրերի՝ սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, միջոցով իրականացված առևտրի շրջանառության հիման վրա:

Մեծածախ է համարվում առևտրի այն տեսակը (գործունեությունը), երբ գնորդը մեծ խմբաքանակով ապրանքներ է ձեռք բերում դրանց հետագա վերավաճառքի համար այլ վաճառողներին, վերամշակողներին, բայց ոչ վերջնական սպառողներին՝ համապատասխան հաշվարկային փաստաթղթերով: Մեծածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ներառում է նաև արտահանման ծավալները (բացառությամբ արտադրողների կողմից անմիջական արտահանումը, ինչպես նաև գազի և էլեկտրաէներգիայի արտահանումը):

Ավտոմեքենաների առևտուրը ներառում է ինչպես մասնագիտացված առևտրի կետերի միջոցով իրականացված ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների վաճառքը, այնպես էլ դրանց տեխնիկական սպասարկումը և նորոգումը:

Ծառայությունների ծավալն արտացոլում է մատուցված տարբեր տեսակի ծառայությունների ծավալը և հաշվառվում է այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվել են ծառայությունները, անկախ վճարումից, առանց ավելացված արժեքի և այլ նմանատիպ (անուղղակի) հարկերի: Ցուցանիշը չի ներառում նաև պետպատվերով իրականացված ծառայությունների ծավալը:

Ծառայությունների ծավալի ցուցանիշը ձևավորվում է կացության և հանրային սննդի կազմակերպման, մշակույթի, զվարճությունների և հանգստի, կրթության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման, անշարժ գույքի հետ կապված գործունեության, տեղեկատվության և կապի, տրանսպորտի՝ օդային, ցամաքային՝ առանց խողովակաշարայինի, փոստային և սուրհանդակային գործունեության, վարչարարական և օժանդակ գործունեության, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության, ֆինանսական և ապահովագրական գործունեության, սպասարկման այլ ծառայությունների (համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգման, անհատական՝ մանածագործական և մորթե ատադրատեսակների լվացման և մաքրման, վարսավիրանոցների և գեղեցկության սրահների և այլն) ծավալից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի վիճակագրական դիտարկումը հիմնականում կատարվում է բժշկական հիմնարկների ցանցի, գործունեության և կադրերի, հիվանդությունների առանձին տեսակների, ինչպես նաև սոցիալական ապահովվածության վերաբերյալ ցուցանիշների հիման վրա:

Բժիշկների ընդհանուր թվաքանակի մեջ ներառվում են բուժական, սանիտարական, սոցիալական ապահովության, կադրերի վերապատրաստմամբ զբաղված հիմնարկներում, գիտահետազոտական ինստիտուտներում, առողջապահական մարմինների կառուցվածքում և այլ հիմնարկներում զբաղված բոլոր բարձրագույն բժշկական կրթությամբ բժիշկները, տարեվերջի դրությամբ: Այս ցուցանիշում հաշվի են առնված ինչպես լրիվ բարձրագույն կրթությամբ բժիշկ-ստոմատոլոգները, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն ունեցող ատամնաբույժները (դանտիստները):

Միջին բուժանձնակազմի ընդհանուր թվաքանակի մեջ ներառվում են բուժական, սանիտարական, սոցիալական ապահովության, նախադպրոցական հաստատություններում, դպրոցներում, մանկատներում և այլ հաստատություններում զբաղված միջին մասնագիտական բժշկական կրթություն ունեցող բոլոր անձինք (բացառությամբ՝ ատամնաբույժ - դանտիստների):

Հիվանդանոցային հիմնարկներում հաշվառման ենթակա է տարեվերջի դրությամբ **մահճակալների այն քանակը**, որը կահավորված է անհրաժեշտ պարագաներով և պատրաստ է ընդունելու հիվանդների, անկախ այն հանգամանքից, թե զբաղված են դրանք հիվանդներով, թե ոչ:

Հիվանդացության մակարդակը որոշվում է առաջին անգամ ախտորոշված հիվանդների և մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակների հարաբերակցությամբ:

Հիվանդացության վերաբերյալ տվյալների վիճակագրական մշակման համար կիրառվում է **Հիվանդությունների միջազգային դասակարգումը**, որը թույլ է տալիս համեմատելի դարձնել հիվանդացության և մահացության վերաբերյալ տեղեկությունները: Սկսած 2004թ.-ից հիվանդությունները դասակարգվում են ըստ հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգման (ՀՄԴ-10):

Հաշմանդամ համարվում է այն անձը, ով ֆիզիկական կամ մտավոր թերությունների առկայության հետևանքով կենսագործունեության սահմանափակմամբ պայմանավորված, սոցիալական օգնության և պաշտպանվածության կարիք ունի:

Անձի կենսագործունեության սահմանափակումն արտահայտվում է ինքնասպասարկման, տեղաշարժման, կողմնորոշման, շփման, սեփական վարքի վերահսկողության, ինչպես նաև աշխատանքային գործունեության ունակության կամ հնարավորության լրիվ կամ մասնակի կորստի ձևով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրական դիտարկումը կատարվում է կրթական հաստատությունների՝ նախադպրոցական հաստատություններ, հանրակրթական դպրոցներ, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ, ինչպես նաև գիտական, մշակույթի, արվեստի, տպագրական նյութեր հրատարակող հաստատությունների գործունեության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հիման վրա:

Նախադպրոցական հաստատությունները (տարվա ընթացքում 10 ամսից ոչ պակաս աշխատող) ապահովում են 1 տարեկանից մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, առողջարարությունը, դաստիարակությունը և ուսուցումը:

Հանրակրթական դպրոցներ են համարվում տարրական, միջին, հիմնական, ավագ և միջնակարգ ուսումնական հաստատությունները և վարժարանները, որոնք իրականացնում են հանրակրթական ծրագրեր:

Քոլեջները հաշվառված են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդհանուր թվում: Քոլեջներում մասնագետների պատրաստումն իրականացվում է միջին մասնագիտական կրթական ծրագրով, ինչպես նաև հանրակրթական և արհեստագործական կրթական ծրագրերով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները համալսարանները և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող այլ կրթական հաստատություններն են: Բարձրագույն կրթությունն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ բակալավրի և մագիստրոսի ծրագրերով, պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում, առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով:

Ոչ պետական ուսումնական հաստատությունների (դպրոցներ, միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններ) թվում հաշվառված են պետական արտոնագիր ունեցող մասնավոր ուսումնական հաստատությունները:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գիտական կազմակերպությունները, անկախ դրանց ճյուղային պատկանելիությունից, կատարում են **գիտական հետազոտություններ**, ներառելով հիմնարար կիրառական հետազոտություններ և մշակումներ գիտության բոլոր ճյուղերում, ինչպես նաև **գիտատեխնիկական ծառայություններ**:

Գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող գիտական կազմակերպությունները ներառում են գիտահետազոտական ինստիտուտները, շինարարական նախագծային և նախագծահետախուզական կազմակերպությունները, դեպի դուրս արտադրանք բաց չթողնող փորձարարական գործարանները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, գիտահետազոտական, նախագծաճարտարագիտական և տեխնոլոգիական աշխատանքներ կատարող արդյունաբերական կազմակերպությունների գիտատեխնիկական ստորաբաժանումները, ինչպես նաև հաշվետու տարում իրենց կազմում հետազոտություններ և մշակումներ կատարող ստորաբաժանումներ ունեցող այլ կազմակերպությունները:

Գիտահետազոտական, նախագծաճարտարագիտական և տեխնոլոգիական աշխատանքներ կատարող **մասնագետների** թվաքանակում ներառված են գիտատեխնիկական աշխատանքների կատարմանն անմիջականորեն մասնակցած բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ (ներառյալ ասպիրանտները) մասնագետները, ինչպես նաև գիտատեխնիկական աշխատանքներ կատարող գիտական կազմակերպությունների և ստորաբաժանումների ղեկավարները:

Գիտահետազոտական, նախագծաճարտարագիտական և տեխնոլոգիական աշխատանքներ կատարող մասնագետների թվաքանակում չեն ներառվում տնտեսագիտական և ֆինանսական ստորաբաժանումների, նյութատեխնիկական ապահովման ստորաբաժանումների, գիտատեխնիկական տեղեկատվության մարմինների, գիտական, գիտատեխնիկական և այլ մասնագիտական գրադարանների, արտոնագրային ծառայությունների մասնագետները և ղեկավարները, բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն չունեցող լաբորանտները, հաշվապահության, կադրային ծառայության աշխատողները, գործավարները և այլն:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների **գիտամանկավարժական աշխատողներ** են համարվում մանկավարժական գործունեության հետ համատեղ գիտահետազոտական ստորաբաժանումներում կամ ԲՈՒՀ-երի ամբիոններում գիտատեխնիկական աշխատանքներ կատարող մասնագետները:

ՓՄՁ ՈԼՈՐՏ

ՓՄՁ վիճակագրական դիտարկման տեղեկատվական աղբյուրները ներառում են ՀՀ ՎԿ վիճակագրական մշտադիտարկման դաշտում գտնվող գործող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (տնտեսավարողներ) տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև՝ ՀՀ ՊԵԿ կողմից ՎԿ-ին տրամադրվող տնտեսավարողների տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՀ-ում ՓՄՁ վիճակագրությունը վարվում է Եվրոստատի ու ՏՀԶԿ համապատասխան մեթոդաբանություններին համահունչ: Ըստ այդմ,

1. ՓՄՁ վիճակագրությունը վարվում է տարեկան պարբերականությամբ՝ նախորդ տարվա վերաբերյալ հասանելի տարեկան արդյունքների հիման վրա:

2. ՓՄՁ սուբյեկտների շրջանակն ընդգրկում է տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրության (NACE rev2) ոչ ֆինանսական բիզնես հատվածի B՝ Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, C՝ Մշակող արդյունաբերություն, D՝ Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, E՝ Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում, F՝ Շինարարություն, G՝ Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում, H՝ Փոխադրումներ և պահեստային տնտեսություն, I՝ Կացության և հանրային սննդի կազմակերպում, J՝ Տեղեկատվություն և կապ, L՝ Անշարժ գույքի հետ կապված գործունեություն, M՝ Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն, N՝ Վարչարարական և օժանդակ գործունեություն բաժինները և S՝ *Սպասարկման այլ ծառայություններ* բաժնի 95՝ Համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում հատվածը (S95):

3. ՓՄՁ սուբյեկտների տարանջատումն իրականացվում է ինստիտուցիոնալ մակարդակում՝ տնտեսական գործունեության հիմնական տեսակով:

4. ՓՄՁ սուբյեկտների կողմից արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների ծավալում (հասույթում) չեն ներառվում ավելացված արժեքի ու ակցիզային հարկերը:

5. Տնտեսական գործունեության հիմնական տեսակը որոշվում է առանձին տնտեսական գործունեության տեսակների գծով ձևավորված ավելացված արժեքներից առավելագույնի մեծությամբ:

6. Աշխատողների թվաքանակում ներառվում են անորոշ կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող վարձու աշխատողները:

7. Եվրամիության և ՏՀԶԿ միջազգային տվյալների հավաքածուն ՓՄՁ դեմոգրաֆիայի վարման համար որպես միավոր դիտարկում է կազմակերպությունը (ինստիտուցիոնալ միավոր): Այն իրենից ներկայացնում է ֆինանսական և ներդրումային որոշումների կայացման առումով ինքնավար սուբյեկտ, որն ունի ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման նպատակով ռեսուրսների բաշխման իրավասություններ և պատասխանատվություն, կարող է մեկ կամ մի քանի վայրերում իրականացնել մեկ կամ մի քանի տեսակի տնտեսական գործունեություն:

8. ՓՄՁ բիզնես-դեմոգրաֆիայի (տնտեսավարողների ծնունդ, մահ (գործունեության դադարեցում, լուծարում), գոյատևում(երկարակեցություն)) վարումն իրականացվում է ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի՝ հետևյալ խմբերով.

   1) Գերփոքր տնտեսավարողներ.
      այդ թվում՝
      - *վարձու աշխատող չունեցողներ,*
      - *1-4 վարձու աշխատող ունեցողներ,*
      - *5-9 վարձու աշխատող ունեցողներ,*
   2) 10-19 վարձու աշխատող ունեցող տնտեսավարողներ.
   3) 20 և ավելի վարձու աշխատող ունեցող տնտեսավարողներ

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Պետական ֆինանսների վիճակագրության տեղեկատվական բազան ձևավորված է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ վիճակագրական կոմիտեին (ՎԿ) տրամադրվող պետական և համայնքային բյուջեների կատարման մասին հաշվետվությունների հիման վրա:

ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների ցուցանիշների դասակարգումն իրականացվում է «Կառավարության ֆինանսների վիճակագրություն2001» (GFS-2001) ձեռնարկի դասակարգմանը համապատասխան:

ՀՀ բյուջետային համակարգը բաղկացած է պետական և համայնքային բյուջեներից: **Պետական և համայնքի բյուջեները**՝ պետության և տեղական ինքնակառավարման մարմիններին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով

վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են:

Բյուջետային եկամուտներն անվերադարձ կարգով օրենսդրությանը համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են:

Բյուջետային ծախսերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների և գործառույթների ֆինանսական ապահովմանն ուղղվող դրամական միջոցներն են:

Բյուջեների հավելուրդը եկամուտների գերազանցման մեծությունն է ծախսերի նկատմամբ:

Բյուջեների պակասուրդը ծախսերի գերազանցման մեծությունն է եկամուտների նկատմամբ:

Պետական բյուջեի դեֆիցիտը (պակասուրդ) **ֆինանսավորվում է** ներքին և արտաքին աղբյուրներից ստացված փոխառու միջոցների, ինչպես նաև բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

ՀՀ համախմբված բյուջեն իր մեջ ներառում է ՀՀ պետական և համայնքային բյուջեները (առանց միջբյուջետային փոխանցումների):

ՀՀ արտաքին պետական պարտքը ներառում է օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ՀՀ կառավարությանը և ՀՀ ԿԲ-ին տրամադրված վարկեր, ինչպես նաև վարկեր՝ տրամադրված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ երաշխիքներով:

ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՏԳ վիճակագրական վերլուծությունը հիմնականում կատարվում է արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի և օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տվյալների հիման վրա: Դիտարկումների աղբյուրներն են ՀՀ մաքսային վիճակագրության, վիճակագրական հետազոտությունների և ՀՀ ԿԲ-ից ստացված տվյալները:

Արտահանման ծավալներում ընդգրկվում են հայրենական արտադրության, նաև՝ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները, իսկ ներմուծման ծավալներում՝ արտասահմանյան արտադրության ապրանքները, որոնք ներկրվել են հանրապետություն՝ ներսում սպառման և վերաարտահանման համար:

Արտահանման և ներմուծման ծավալներում ընդգրկված չեն արժեթղթերը, շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները, դրամական ոսկին, հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումները, ցուցահանդեսների և տոնավաճառների համար ուղարկված կամ ներկրված ապրանքները: Արտահանման ծավալները հաշվարկվում են ՖՕԲ-գներով, իսկ ներմուծմանը՝ ՍԻՖ-ով (ներառյալ ապահովագրությունը և տրանսպորտային ծախսերը՝ մինչև ներմուծող երկրի տարածք):

Ապրանքների արտահանման և ներմուծման հաշվառումը կատարվում է համաձայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության **ապրանքային անվանացանկի դասակարգչի**:

Օտարերկրյա ներդրում է համարվում գույքի ցանկացած տեսակ, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ (ոչ նյութական ակտիվներ), որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով:

Օտարերկրյա ներդրումները ֆինանսական ներդրումներ են (ֆինանսական միջոցների հոսքեր) և ըստ տեսակի լինում են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումների տեսքով: Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տեղեկատվության համակարգը համապատասխանեցված է «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6»-ի խմբագրության դրույթներին:

Մաքուր պաշարներն ընդգրկում են հաշվետու ժամանակահատվածի վերջին, ինչպես գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարները, այնպես էլ պարտավորությունների գծով մարումները, գների, փոխարժեքի և այլ՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունները:

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը կազմվում է ԱՄՀ կողմից հրատարակված «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի 6»-րդ ձեռնարկի (2009թ.) մեթոդաբանությանը համապատասխան:

Վճարային հաշվեկշիռն իրենից ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ: Վճարային հաշվեկշռում գրանցվում են

ռեզիդենտների[6] և ոչ ռեզիդենտների միջև իրականացված բոլոր գործառնությունները, որոնք վերաբերում են ապրանքներին, ծառայություններին, սկզբնական և երկրորդային եկամուտներին, կապիտալ տրանսֆերտներին, չարտադրված ոչ ֆինանսական ակտիվներին, ֆինանսական ակտիվներին և պարտավորություններին:

Վճարային հաշվեկշռի հիմքում ընկած են ՀՀ մաքսային վիճակագրության, բանկային և ֆինանսական համակարգերի, կազմակերպություններում և տնային տնտեսություններում իրականացված վիճակագրական հետազոտությունների տվյալները: Որոշ ցուցանիշներ (ապահովագրական վճարներ, ՀՀ ռեզիդենտ ճանապարհորդների ծախսերն արտասահմանում) ստացվում են ԱՄՀ մեթոդաբանությամբ արվող գնահատականների միջոցով:

Վճարային հաշվեկշիռը կազմված է երեք հիմնական հաշիվներից՝ ընթացիկ հաշվից, կապիտալի հաշվից և ֆինանսական հաշվից: Ընթացիկ հաշվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, սկզբնական և երկրորդային եկամուտների, կապիտալի հաշվում՝ կապիտալ տրանսֆերտների, չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների, իսկ ֆինանսական հաշվում՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները: Մեթոդաբանական առումով ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդը, բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, ինչը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել «մաքուր սխալների և բացթողումների» հոդված:

Վճարային հաշվեկշիռը կառուցվում է հաշվապահական հաշվառման հետևյալ սկզբունքով. ամեն մի գործառնություն գրանցվում է կրկնակի՝ որևէ հաշվի կրեդիտում և մեկ այլ հաշվի դեբետում:

Ընթացիկ հաշվում արտացոլվում են՝

- ✓ ապրանքների և ծառայությունների արտահանումը և ներմուծումը,
- ✓ սկզբնական եկամուտները
- ✓ երկրորդային եկամուտները:

[6] Կառուցվածքային միավորը (իրավաբանական անձ և տնային տնտեսություն) համարվում է տվյալ տնտեսական տարածքի ռեզիդենտ, եթե դրա տնտեսական շահերի հիմնական շրջանը (կենտրոնը) այդ երկրի տնտեսական տարածքում է: Ընդ որում, տվյալ երկրում տնտեսական շահեր ունենալը նշանակում է, որ տվյալ երկրի տնտեսական տարածքում գոյություն ունի որոշակի տեղակայման վայր, կացարան, արտադրության կազմակերպման համար նախատեսված շենք, շինություն կամ այլ տարածք, որտեղ կամ որտեղից տնտեսավարող սուբյեկտն իրականացնում է և հետագայում էլ մտադրություն ունի իրականացնել որոշակի ծավալի տնտեսական գործունեություն և գործառնություններ այլ սուբյեկտների հետ՝ անորոշ ժամանակով կամ որոշակի երկար ժամանակահատվածում (սովորաբար 1 տարի կամ ավելի):

Կապիտալի հաշվում ներառվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ստացվելիք և վճարվելիք կապիտալ տրանսֆերտները և ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ձեռքբերված և վաճառված չարտադրված ոչ ֆինանսական ակտիվները:

Ֆինանսական հաշվում արտացոլվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառույթները:

Ֆինանսական հաշիվը ներառում է՝

- ✓ ուղղակի ներդրումները,
- ✓ պորտֆելային ներդրումները,
- ✓ ֆինանսական ածանցյալները,
- ✓ այլ ներդրումները,
- ✓ պահուստային ակտիվներ:

ՀՀ **միջազգային ներդրումային դիրքը** վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը որևէ ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: Միաժամանակ, հաշվետվության մեջ արտացոլվում են բոլոր այն փոփոխությունները, որոնք կատարվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների շնորհիվ:

ՀՀ ՄՆԴ սերտորեն կապված է ՀՀ վճարային հաշվեկշռի հետ և արտացոլում է տնտեսության արտաքին ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարները, իսկ ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը՝ այդ ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները (զուտ հոսքերը կոնկրետ ժամանակահատվածում):

Համախառն արտաքին պարտքը ժամանակաշրջանի ցանկացած պահին փաստացի ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների չվճարված գումարն է, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում ժամանակի որևէ պահին և իրենից ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:

Արտաքին պարտքի **գործիքներն են**՝ կանխիկ դրամական միջոցները և ավանդները, պարտքի արժեթղթերը, վարկերը, առևտրային վարկերը և

կանխավճարները, այլ պարտքային պարտավորությունները, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող միջֆիրմային վարկերը: